Լավությո՛ւն արա, ջուրը գցիր՝ մի օր առջևդ կգա:

ԲԱՐԵԳՈՐԾ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ «ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ»

BAREGORTS, 2023, № 4(60), БАРЕГОРЦ

ԱԶՆԻՎ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

...Եվ ահա լույս է տեսնում «Բարեգործ» թերթի **60**-րդ համարը: «Բարեգործ»-ը փոքրադիր, էջերով սահմանափակ, փոքրածավալ թերթ է, բայց այդ փոքրադիր թերթն իր էջերում պարփակում և ներկայացնում է լուսավոր ու պայծառ, մարդասիրությամբ շաղախված գործունեություն:

Ազնիվ բարեգործությունը իսկական ու բարձր հայրենասիրություն է: Բարեբախտաբար, ի շահ և ի բարօրություն մեր կարոտյալների՝ Հայաստանում կա իսկական բարեգործություն: Տասնամյակների ընթացքում հենց այդպիսի գործունեություն է ծավալել «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը», որի գործադիր տնօրենը հայտնի իրանագետ, հմուտ մանկավարժ, հանրային և մշակութային ճանաչված գործիչ Գուրգեն Մելիքյանն է: Նրա տնօրինած հիմնադրամը մեծապես հայտնի է ոչ միայն Հայաստանում, այլև արտերկրում՝ Հայաստանի սահմաններից դուրս, և ճանաչված է իր բարեգործական բացառիկ գործունեությամբ:

«Բարեգործ» թերթը մանրամասնորեն պահել է և ճշտորեն արտացոլել է հիմնադրամի գործունեությունը: Իսկ այդ գործունեության սահմանները եղել են և մնում են շատ լայն ու ընդարձակ: Թերթը տարիներ շարունակ հետևողականորեն ներկայացրել է բոլոր այն կազմակերպությունների և անհատ անձանց ցուցակները, որոնք նվիրատվություն են արել հիմնադրամին: Բոլոր հաշիվները ներկայացվել են, ինչպես ասում են, կոպեկ առ կոպեկ: Նույնը նաև՝ դրամահավաքի պարագային: Ես, որ ի մոտո գիտեմ հիմնադրամի գործունեությունը, Աստծո և մարդկանց առաջ վկայում եմ, որ նվիրատվությունների և դրամական զոհողությունների գործում վիթխարի դեր է խաղացել Գուրգեն Մելիքյանի անձը, նրա կերպարն ու նկարագիրը: Մարդիկ հավատացել են և վստահել, տեսել են, որ իրոք բարեգործություն է արվում, ցանկացել են մասնակից լինել այդ ազնիվ ու մարդասիրական գործին:

«Բարեգործ» թերթը մանրամասնությամբ և հաշվապահական ճշգրտությամբ իր համարներում նույնպես հետևողականորեն ներկայացրել է հիմնադրամի ծախսերը նույնպես կոպեկի ճշգրտությամբ: Ի դեպ, հիմնադրամի բաշխման ամեն մի հատկացումը, նույնիսկ ամենափոքր գումարը հիմնավորապես քննարկվել է հիմնադրամի հոգաբարձության խորհրդի նիստերում:

Կարող է այն տպավորությունն ստացվել, թե «Բարեգործ» թերթը տեղեկատու - հաշվետվություն է: Բայց այդ տեղեկատվությունը մշտապես ուղեկցվել է օժանդակ բազմաթիվ նյութերով՝ բարեգործ անձանց հարուստ կենսագրական-դիմանկարներով, տպավորիչ լուսանկարներով, հիմնադրամի միջոցների և ծրագրերի մասին հաղորդումներով և ի տեղին նաև հայրենասիրական այլ նյութերով:

«Բարեգործ» թերթի տասնյակ համարներում տրվել-ներկայացվել են հարյուրավոր անուններ, մարդիկ, որոնց այս կամ այն կերպ օգնել է հիմնադրամը, բայց այդ անուններից ամեն մեկը մի դրամա է ներկայացնում, ծանր ու ազդեցիկ ընտանեկան վիճակ կամ թե ողբերգական մի ճակատագիր: Հարյուրավոր ընտանիքներ ծանր փորձությունների միջոցով անցել և այդ սարսափելի տարիներին դիմացել են հիմնադրամի օգնությամբ:

Հիմնադրամը վիթխարի գործունեություն է ունեցել: Ոչ միայն կարոտյալներին նյութական օգնություն է ապահովել, մեծապես օգնել զոհվածների ընտանիքներին ու նրանց զավակներին, հիվանդներին ու հաշմանդամներին, այլև արել է կառուցողական գործեր և շահեկան ազգային աշխատանք՝ պուրակների հիմնադրում՝ ազգային նշանավոր անձանց պատվո հիշատակումով:

Հիմնադրամը ապահովել է հարյուրավոր կարիքավոր ուսանողների ուսման վարձը, հրատարակել է արժեքավոր գրքեր և ուսումնասիրություններ, մեծապես նպաստել է մշակութային ձեռնարկների, երևելի և պատվավոր անձանց անուններով սահմանել է կրթաթոշակներ:

«Բարեգործ» թերթն իր էջերում պահել է այս ընդարձակ գործունեության տարեգրությունը: Եվ, իհարկե, այնուամենայնիվ, շատ ու շատ բան տեղ չի գտել թերթի էջերում, միայն ու միայն այն պատճառով, որ բարեգործական գործունեությունը եղել է շատ ընդարձակ և տարողունակ, իսկ թերթի էջերը՝ փոքրադիր և սահմանափակ:

Ու նաև այն պատճառով, որ ամեն մի առանձին դեպքի ետևում կա մարդկային սրտառուչ և հուզիչ պատմություն: Հիմնադրամը փաստաթղթային և լուսանկարչական վիթխարի արխիվ ունի: Մի լուսանկար մինչև հիմա աչքերիս առաջ է: Մի կարիքավոր ընտանիքի հիմնադրամը կով է նվիրել: Ընտանիքը՝ ծնողները և մի քանի երեխա, նկարվել է կովի կողքին: Հազիվ տասներկուամյա մի վտիտ երեխա գրկել է կովի պարանոցը և շողուն երջանիկ հայացքով նայում է մեզ. այլևս երջանիկ են, կով ունեն և թարմ կաթ կխմեն:

Երբ Քաշաթաղի դպրոցի տնօրինուհին ասաց, որ այն բանից հետո, երբ երեխաներին ամեն առավոտ մի բաժակ կաթ ու մի կարկանդակ եք տալիս, այլևս դպրոցից բացակայող չկա, 287 աշակերտ այլևս կանոնավոր դասի է գալիս, Գուրգեն Մելիքյանի աչքերից արցունք եկավ: Ես էլ հուզվեցի նրա հետ:

Այսպիսի հարյուրավոր պատմություններ կան, «Բարեգործ» թերթը ո՞ր մեկը նկարագրի կամ ներկայացնի: Մեր ազգային ողբերգությունը գնալով խորացավ, և մենք հայտնվեցինք թևաթափ ու խորտակված վիճակում: Եվ այնուամենայնիվ, հիմնադրամը, այս նոր իրավիճակների մեջ անգամ շարունակում է իր մարդասիրական բարձր գործունեությունը, ունի բոլոր կարոտյալների ցուցակներն ու հասցեները և ջանում է օգնություն հասցնել ամեն մեկին: «Բարեգործ» թերթը միշտ հիմնադրամի հետ է, հիմնադրամի կողքին՝ իբրև մարդասիրական այդ բարձր գործունեության հայելին:

Հիմնադրամին մաղթում ենք դիմացկունություն, համբերություն իր ծանր ու դժվարին գործունեության մեջ: Նման գործունեությունը իսկական հայրենասիրության ամենաբարձր դրսևորումներից մեկն է մեզանում:

«Բարեգործ» թերթին մաղթում ենք տասնյակ ու տասնյակ նոր համարներ, բոլոր աղետյալներին ու կարոտյալներին մաղթում համբերություն և հավատ վաղվա օրվա ու իսկական մարդասիրության հանդեպ:

ԵՐՎԱՆԴ ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՏՎԱԾ

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» կանոնադրությունից, հաստատված ՀՀ Արդարադատության նախարարի №284, 2001թ-ի մայիսի 12-ի հրամանով

2. Հիմնադրամի գործունեության առարկան և նպատակները

2.1 Հիմնադրամի նպատակը ՀՀ, ԼՂՀ և Սփյուռքի մտավորականության ու գործարար շրջանների ուժերը միավորելու միջոցով ՀՀ և ԼՂՀ բազմազավակ ու խիստ կարիքավոր ընտանիքներին, իսկ բացառիկ դեպքերում՝ տաղանդավոր ուսանողներին, գիտնականներին նյութական ու բարոյական օժանդակություն ցուցաբերելն է:

2.2 Հիմնադրամի գործունեության առարկան է՝

2.2.1. նպաստել գաղթականների բնակեցմանը ու վերաբնակեցմանը Քաշաթաղի շրջանում,

2.2.2 բարեգործական գործունեության իրականացում,

2.2.3. շինարարական և վերականգնողական աշխատանքների աջակցում,

2.2.4. նպաստել գաղթականների, բազմազավակ և կարիքավոր ընտանիքների, կարիքավոր ուսանողների տնտեսական գործունեությունը՝ նրանց սոցիալական վիճակը բարելավելու նպատակով,

2.2.5. նյութական օգնություն տրամադրել կարիքավոր ուսանողներին և դասախոսներին, նշանակել կրթաթոշակ կարիքավոր և բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին,

2.2.6. կազմակերպել պատմամշակութային ժառանգության, մասնավորապես՝ հնագիտական հուշարձանների ուսումնասիրման, պեղման և վերականգնման աշխատանքներ,

2.2.7. իրականացնել գիտական և կրթական ծրագրեր, հովանավորել գիտահետազոտական, գիտամանկավարժական և գիտահրատարակչական ծրագրեր,

2.2.8. իրականացնել բարեգործական բեռների փոխադրում,

2.2.9. ՀՀ-ում հիմնադրամների համար չարգելված այլ գործունեության իրականացում:

«Բարեգործ» թերթի սիրելի ընթերցող,
Ներկայացնում ենք հիմնադրամի լավագույն բարերարներին, ովքեր հավատացին մեզ և ոչինչ չխնայեցին հիմնադրամի ծրագրերին սատարելու և դրանք իրականացնելու գործում:
Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում:

Dear Reader,
Below is the list of people who truly believed in our cause and contributed generously to our foundation over the years.
We express our deep gratitute to all of them.

Abrahamian Jackline and Harout (USA), Aboolian Karine and Markarian Saro (USA), Alajajian Teresa and Hayk (USA), Aladadian Vahan (USA), Alexandrian Irina (USA), Baghdasaryan Ashot (Armenia), Balian Patty and Raffi (USA), Barsam Diane (USA), Bazikian Anahit and Raffi (USA), Baghdasarian Alenush and Alec (USA), Charchian David, Charchian Arthur (USA), Fundukian Sona and Vartan (USA), «Gasprom Armenia» educational sport complex (Armenia), Ghevondian Masis (USA), Gharibian Karine and Vrej (USA), Hayrapetian Eleanora and Armen (USA), Halebi Anahit and Gabriel (USA), Javakova Zara (USA), Kalognomos Medea and Alexander (USA), Kanian Mary and Nick (USA), Kahve Tony (Great Britain), Khachatrian Aida and Chobanian Aram (USA), Marashelian Levon (USA), Martirossian Seda and Tim (USA), Mesropian Medik and Seroj (USA), Nazarian Bernard (Great Britain), Ovanessian Irina and Arkady (USA), Papayans Sheila and Serj (USA), Pilosian Ani (USA), Pilosian Silva and Vagharshak (USA), Vanetsyan Veronica and Karen (Switzerland), Vartanian Lilit and Armond (USA).

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՑԱԳՆԱ ՆԻՄՏԵՐ

ՎԱՐԴԵՆԻՍՈՒՄ, ԱՐԱԳԱԾՈՏՆՈՒՄ, ԿՈՏԱՅՔՈՒՄ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԲՌՆԱԳԱՂԹԱԾ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻՆ

Հոգաբարձության խորհրդի անդամները Արագածոտնի մարզի Ներքին Սասնաշենում՝ Արևիկ և Էռնեստ Գրիգորյանների բազմանդամ ընտանիքում

Սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի ցեղասպանական լայնածավալ հարձակման հետևանքով Արցախի հայությունը՝ շուրջ 120 000 մարդ, մահվան սպառնալիքով, այնտեղ գտնվող ռուս խաղաղապահների ներկայությամբ, հարկադրված էր լքել դարավոր հայ մնացած Արցախը և փոխադրվել Հայաստանի Հանրապետություն:

Դա արցախահայության սպանդից փրկություն էր և պատմական բնօրրանի կորուստ՝ ճիշտ ու ճիշտ 1915 – 1923 թթ. ողբերգական իրադարձությունների կրկնությունն ու շարունակությունը 21-րդ դարում՝ մեր «ռազմավարական դաշնակցի», «մարդասիրական» անուններով միջազգային անգործունյա կազմակերպությունների և իրեն «քաղաքակիրթ» հորջորջող մարդկության աչքի առաջ: Հայաստանի բնակչությունն «աճեց» իրենց տունուտեղը, ունեցվածքը, աշխատանքը, ծննդավայր հայրենիքը կորցրած, իրենց հազի տան զգեստներով միայն փրկված ավելի քան 100 հազար մեր ազգակիցներով, որոնք ունեն տնտեսական ու կենցաղային ամեն ինչի ու մանավանդ սփոփանքի և հոգատարության կարիք:

Թեև պետականորեն որոշ բան է արվում, սակայն պատերազմական վիճակում գտնվող, բազում չլուծված հոգսեր ունեցող մեր պետության միջոցները բավարար չեն աղետի մեջ հայտնված մեր հայրենակիցներին զոնե բավարար չափով գոհացնելու համար: Կարիքավոր են նրանց մեծ մասը կամ գրեթե բոլորը: Նման իրավիճակում մեծանում է հատկապես համապատասխան կառույցների անվրեպ գործունեության, անհատ բարերարների ու նվիրատուների, բարեգործական հաստատությունների, այդ թվում և մեր՝ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» գործունեության դերն ու նշանակությունը:

Մեր հիմնադրամը ժամանակավորապես դադարեցրել է ծառատունկի, գրքերի և գիտամշակութային այլ ծրագրերի իրագործումը և իր միջոցներն այժմ կենտրոնացնում է Հայաստանում ապաստանած արցախցի մեր քույրերի ու եղբայրների զոնե նվազագույն պահանջների բավարարման ուղղությամբ:

Փոխվել է իրավիճակը. օգնության դիմումները շատ են, միջոցներն ու հնարավորությունները՝ քիչ: Նոր պայմաններում հիմնադրամի գործադիր տնօրեն Գուրգեն Մելիքյանի և հոգաբարձության խորհրդի

նախագահ Արծրուն Ավագյանի նախաձեռնությամբ ու մյուս անդամների համագործակցությամբ՝ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի մեր աշխատավայրում պարբերաբար կազմակերպվող գործնական նիստերից բացի, արտագնա նիստեր են կազմակերպվում նաև Վարդենիսում, Արագածոտնի մարզի Ներքին Սասնաշեն գյուղում, այցելություններ կատարում Կոտայքի, Գեղարքունիքի մարզերի բնակավայրերում (Աշտարակ, Հրազդան, Արտաշատ և այլուր) տեղավորված մեր հայրենակիցներին, յուրաքանչյուր ընտանիքին ըստ անձերի քանակի բաժանում նախատեսված օգնությունը (հագուստ, սնունդ, տնային պարագաներ, կենցաղային իրեր) մոտիկից անձամբ

ծանոթանում շահառուների կենսապայմաններին ու օրըստօրեական կարիքներին՝ դրանց հաշվառումով նախատեսելով կազմակերպվելիք հաջորդ օգնությունը:

***

Դժվարություններով ու փորձություններով անցած այս վերջին տարիներից քաղած դասերը, աշխարհը դեպի լավը փոխելու մեր մեծ ցանկությունը թող գալիք տարին նոր ուժով ու նվիրումով սկսելու հնարավորություն տան բոլորիս: Խաղաղություն մեր հայրենիքին:

Ս/թ հոկտեմբերի 27-ին Վարդենիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Կարեն Մկրտչյանը համայնքապետարանի վարչական շենքում պատշաճ հանդիսավորությամբ ընդունեց հիմնադրամի գործադիր տնօրեն պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանին, հոգաբարձության խորհրդի նախագահ պրոֆ. Արծրուն Ավագյանին, վարչության անդամներ պրոֆ. Մարատ Գրիգորյանին և պրոֆ. Սամվել Մուրադյանին, ով նաև հիմնադրամի «Բարեգործ» թերթի գլխավոր խմբագիրն է:

Այցելուները ծանոթացան Արցախի Հանրապետությունից տեղահանված, Վարդենիս համայնքում բնակություն հաստատած ընտանիքների կենցաղային պայմաններին և դպրոցահասակ երեխաներին տեղում նվիրեցին տաք բլուզներ ու կոշիկներ, մինչև երեք տարեկան փոքրիկներին՝ տակդիրներ ու այլ պարագաներ:

Մեր շահառուները սահմանամերձ Վարդենիսում տեղավորվելու առաջին իսկ օրերին արդեն ստացել էին հիմնադրամի նվիրաբերած առաջին անհրաժեշտության շարժական գազօջախներ և հիգիենիկ պարագաներ: Այս այցելությանը հոգաբարձության խորհրդի անդամները նրանց հանձնելու էին բերել Հայաստանում պատվիրված և արտադրված որակյալ հագուստը, ինչպես նաև՝ երեխաների համար 70 զույգ բարձրորակ կոշիկ, 110 տաք, որակյալ ձմեռային հուդիներ (երկարաթև, կնգուղանման գլխարկով վերնազգեստ):

Վարդենիսի քաղաքապետարանը սեպտեմբերյան վերջին դեպքերից հետո «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամից» ստացավ կարևոր աջակցություն Արցախից

Վարդենիսում

բռնությամբ տեղահանված մեր հայրենակիցներին տրամադրելու համար, որով ավելի դյուրացավ նրանց տեղավորման և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովելու գործը: Վարդենիսի քաղաքապետարանի աշխատակազմն իր խորին շնորհակալությունը հայտնեց հիմնադրամի գործադիր տնօրեն Գուրգեն Մելիքյանին և հոգաբարձության խորհրդին՝ նման կարևոր աջակցության համար:

Երեխաները փորձում են հիմնադրամի նվերները՝ հայկական արտադրության կնգուղավոր տաք հագուստները Վարդենիսի քաղաքապետարանում

Հոգաբարձության խորհուրդն իր հերթին շնորհակալություն է հայտնում բոլոր հովանավորներին՝ նվիրատվությունների և այս ծանր ու դժվար պահին մեր հայրենակիցներին օգնելու հնարավորություն ընձեռելու համար:

Նախաամանորյան մեր մյուս ուղևորությունը ձգվում էր դեպի Արագածոտնի մարզ՝ Աշտարակ և Ներքին Սասնաշեն, որտեղ դեկտեմբերի 9-ին սպասում էին դեռևս Արցախից ծանոթ մեր շահառուները: Հինգ երեխա ունեցող մի ընտանիք տեղավորվել էր Աշտարակում, իսկ ինը երեխաներով Արևիկ ու Էռնեստ Գրիգորյանների ընտանիքը՝ Ներքին Սասնաշենում: Հոգաբարձության խորհրդի նույն կազմով էինք, և այս անգամ էլ սովորականի պես մեզ ընկերակցում էր նախկին արցախաբնակ Զոհրաբ Ըռքոյանը լուսանկարչական իր սարքով, որի լուսանկարների մի մասը ներկայացվում են «Բարեգործ»-ի ընթերցողներին:

Աշտարակում մեր հանդիպումը երկար չտևեց: Ծանր ու տխուր էր զրույցը ամեն ինչ կորցրած, միայն հույսով ապրող և անորոշ հեռանկարի դատապարտված տարաբախտ ու անսփոփ հայրենակիցների հետ, մանավանդ որ հուսադրող խոսքերն անգամ վաղուց արժեզրկված են:

Նախատեսված էր խորհրդի արտագնա նիստը անցկացնել ինը երեխա ունեցող Արևիկ և Էռնեստ Գրգորյանների տանը՝ Ներքին Սասնաշենում:

Կոտայքի մարզ, գյուղ Զրառատ, Ասրյան Մարիամ, Ամիրշատյան Արսենենց տանը

Գտանք տունը: Ներքին Սասնաշեն գյուղի հիմնադիրները ավելի քան մեկ դար առաջ՝ անցյալ դարասկզբին Մեծ ցեղասպանության հետևանքով պատմական Սասունից տեղահանված գաղթականներ են եղել: Նրանց հաջորդների պատմական հիշողության մեջ վառ է մնացել անտուն նախնիների՝ գաղթականի կարգավիճակի ողբերգականությունը:

Տեսնելով ինը երեխա ունեցող, իրենց փոքրիկ ավտոբուսով Արցախի Ճարտարից Ներքին Սասնաշեն հասած Գրիգորյանների վիճակը՝ տեղացիներից ազգասեր մեկը իր նորակառույց երկհարկ, դեռևս լիարժեք չհարդարված տունն է ժամանակավոր անվարձ տրամադրել այս բազմանդամ ընտանիքին՝ մինչև փախստականների տան հարցի նախատեսված գործնական լուծումը հենց նույն գյուղում:

Ի դեպ, մեր հանդիպած արցախցիները միմյանցից անկախ նույն պատասխանն էին տալիս Արցախ վերադառնալու հնարավորության հարցին. ծննդավայր կվերադառնանք սիրով, եթե լինեն անվտանգության պետական և միջազգային երաշխիքներ: Հակառակ պարագայում, շեշտեցին Գրիգորյանները, անիմաստ է ինը երեխայով կրկին բռնել գաղթի ճամփան՝ այն էլ անորոշ հեռանկարով:

Այս պայմաններում էլ տանտերերը՝ Արևիկն ու Էռնեստը, հայկական ավանդական հյուրասիրության համեստ սեղան էին պատրաստել, և հոգաբարձության խորհրդի արտագնա նիստը անցկացրինք փայտով տաքացվող վառարանի կողքին, անշուշտ, նստելու աթոռների խիստ պակասությամբ:

Տանտերերը շնորհակալությամբ ընդունեցին հիմնադրամի կողմից նվիրած պահածոյացված սննդի տուփերի՝ սահմանված քանակի արկղերը, համապատասխան չափսի տաք որակյալ հագուստները: «Սպիտակ նապաստակ» փափուկ խաղալիքները մի պահ մեղմեցին ընդհանուր մռայլությունը, երեխաները հուսադրված ուրախացան:

Հենց դրա համար արժեր մեկնել հեռավոր այդ գյուղը՝ Ներքին Սասնաշեն, քանի որ մեր այցելությամբ ու նվերներով թեկուզ մի պահ թեթևակի ուրախություն պարգևեցինք ծննդավայր Արցախից վտարված բազմանդամ ևս մի ընտանիքի:

Հոգաբարձության խորհրդի արտագնա նիստը, որ կայացավ Գրիգորյանների ժամանակավոր տանը վերածվեց տանտերերի հետ ընթացիկ իրավիճակի քննարկման ու անկեղծ զրույցի: Ինը երեխաների մայր Արևիկը կարծես մեր ուսանողուհիներից մեկը լիներ. նա ասես մանկապարտեզի դաստիարակ կամ տնային մի դպրոցի դասվար լիներ՝ աշխույժ, ավյունով լի, շարժուն ու կենսախինդ, ամեն ինչ հասցնող: Նաև բանաստեղծուհի՝ որ իր ոտանավորներն էր սովորեցրել զավակներին և նրանց պատվիրում էր սմունքել, որ հաճույքով անում էին բոլորը:

Ուշ երեկոյան Երևան էինք վերադառնում մի փոքր թեթևացած մարդու գոհունակությամբ, բայց և դարերով մեր ժողովրդին մտահոգող անպատասխան հարցի հոլովումով՝ մինչև ե՞րբ մենք պիտի հայրենիք կորցնենք ու գաղթական դառնանք:

Հոգաբարձության խորհրդի անդամները Աշտարակում

«ԱՐԵՎԱՇՈՂ ՄԵՐ ԼԵՌՆԱԼԱՆՋԵՐԸ...»

ՀՀ վաստակավոր նկարիչ, Եվրոպայի բնական գիտությունների ակադեմիայի կողմից (Գերմանիա) Կանդինսկու շքանշանի արժանացած Շմավոն Շմավոնյանի ստեղծագործությունները հանրահռչակված են թե՛ Հայաստանում, թե՛ արտերկրում: Բացի այն, որ նա անհատական բազմաթիվ ցուցահանդեսներ է ունեցել Ամերիկայում(շուրջ տասն անգամ), Կանադայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Պոլսում, Մոսկվայում և այլուր, նրա կտավները զարդարում են աշխարհի շատ պատկերասրահներ ու հաստատությունների վարչական մասնաշենքեր:

Միջազգային բարձրագույն պարգևների (այդ թվում նաև ՄԱԿ-ի կանադական կառույցներից մեկի կողմից շնորհված պատվավոր ակադեմիկոսի կոչման) արժանացած գեղանկարիչը մեր հնագույն և նվիրյալ բարեբարներից է, հոգաբարձության խորհրդի անդամ, կենսասեր ու սրտաբաց, շռայլ մտավորական, որն իր աշխատանքների հասույթից բարեխղճորեն բաժին է հանում մեր հիմնադրամին՝ նրա բարեգործական ծրագրերի և նեղյալների մարդասիրական օգնության իրականացման համար:

Օրերս ամերիկահայ, բարեկիրթ ու բարձր ճաշակի տեր մի անձնավորություն, իր հարազատին հիվանդանոց այցելելով և այնտեղ պատին վրձնի վարպետի՝ հայկական բնաշխարհը պատկերող կտավներից միայն մեկը դիտելով՝ այնքան է տարվել գեղանկարչի գունախաղերով ու հմայիչ արվեստով, որ փնտրել-գտել է իրեն անծանոթ արվեստագետի հասցեն և սրտաբուխ մի նամակով նրան է հայտնել իր անկեղծ հիացմունքը վերջինիս բարձր արվեստի հանդեպ:

Շմավոն Շմավոնյանի երկու բնանկարների հետ միասին ընթերցողին ենք ներկայացնում այդ պատահական դիտորդի նամակը.

«Բարի լույս, հրաշալի արվեստագետ: Հուսամ՝ լավ եք:

Ամերիկայում եմ ապրում և մի քանի օր առաջ հարազատներիցս մեկին այցելության էի գնացել հիվանդանոց: Սան Պեդրոյի շրջանում՝ թոռանս քաղաքում է գտնվում այն: Դուրս գալու պահին հանկարծ արևաշող մեր լեռնալանջերը տեսա պատին, ու առաջին հերթին Ձեր անունն եկավ միտքս:

Մի պահ չհասկացա՝ որտեղ եմ ես: Հետո էլի՛ գամվեցի նկարի առջև:

Եղբայրս ժպտաց ու ասաց, որ մի քանի օր առաջ էլ ինքն է նույն զգացումն ունեցել: Այո՛, պատվավոր ու գեղեցիկ՝ Ձեր անունն էր ներկայացված նկարի կողքին:

Հպարտությունս և հուզմունքս անսահման էին…

Շնորհակալ եմ Ձեզ՝ Ձեր նվիրյալ, հայաշունչ արվեստի համար»:

Խոստովանենք՝ հակիրճ, բայց բովանդակալից ու հուզիչ նամակ է՝ ներաշխարհով հարուստ մարդուն ու արվեստագետին, և իրեն՝ ազգային արվեստով ու արվեստագետով օրինապես հպարտացող հայ մարդուն բնութագրող:

ԲԱՐԻ՛ ՀԻՇԵՆՔ ՆՐԱՆ ԵՎ ՏԱ՛ՆՔ ԶՕՂՈՐՄԻՆ

Նոյեմբերի 1-ին կյանքից հեռացավ մեր ժողովրդի փառապանծ զավակներից մեկը՝ ***Վարդան Ֆրնդրքյանը,*** մի անձնավորություն, որը մշտապես իր հոգում կրել է Տրապիզոնի Գրոբի գյուղից համշենահայ իր նախնյաց ավանդած ազգային ոգին ու էությունը: Նա ներկայացուցիչն էր հայրենազրկված սփյուռքահայերի այն փաղանգի, որ ստեպ-ստեպ բնակվելով աշխարհի տարբեր անկյուններում՝ իր ողջ գիտակցական կյանքը նվիրաբերել է սփյուռքի հայկական կյանքի կազմակերպմանը, Հայաստանում և Արցախում բազմաթիվ բարեգործական ծրագրերի իրականացմանը:

Վարդան Ֆրնդրքյանը ծնվել է 1930 թ. օգոստոսի 1-ին Ղրիմի Նովոյա Բուրլուջա գյուղում: Նա Ներսես և Իսկուհի Ֆրնդրքյանների երրորդ զավակն էր՝ Արաքսի և Անահիտի փոքր եղբայրը:

Վարդանը կրում էր համշենցի իր մեծ պապի անունը: Ֆրնդրքյանների ընտանիքը Տրապիզոնում հայտնի մտավորականներ էին: Վարդանի հայրը դպրոցում թուրքերենի ուսուցիչ էր և հայերենի փայլուն գիտակ. նա իր բազմաթիվ հոդվածներով հարստացրել է սփյուռքյան մամուլի էջերը: Ֆրնդրքյանների ընտանիքը բազմահազար հայերի նման Հայոց ցեղասպանության տարիներին տարագրվում է իր բնօրրանից և հաստատվում Ղրիմում:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Ստալինն ամբողջ Ղրիմը վերագրավելուց հետո տեղի ժողովրդին, բացի ռուսներից, աքսորում է Սիբիր: Ֆրնդրքյանների ազգականները ևս աքսորվեցին: Խուսափելով խորհրդային իշխանությունների հալածանքներից՝ Ֆրնդրքյանների ընտանիքը 1943 թ. Ղրիմից գերմանացիների նահանջի ընթացքում տեղափոխվում է Գերմանիա: Շատ հայերի հետ Ներսեսի ընտանիքը ևս հաստատվեց Նեռնքիրշեն գյուղում՝ ենթարկվելով բռնի աշխատանքի: Պատերազմից հետո շուրջ 3.000 հայ տարագիրներ Եվրոպայի տարբեր քաղաքներից հաստատվում են Գերմանիայում՝ գաղթական այդ հայերի համար առանձնացված և ամերիկյան վերահսկողության ներքո գտնվող Շտուտգարդ քաղաքի մոտ գտնվող Ֆունկերկազերն զորամասի հատուկ ճամբարում և քաղաքի արվարձաններում: Այնտեղ են մնում 1945-ից մինչև 1949 թթ.: Տարագիր այս հայերի համար ճակատագրական է դառնում 1946 թ. հանդիպումը ԱՄՆ-ից Գերմանիա այցելած հայտնի ռեստորանատեր, ազգասեր ու ամերիկյան քաղաքական և զինվորական շրջանակներում հեղինակություն վայելող Ջորջ Մարտիկյանի հետ: Վերջինս 1947 թ. վերադառնալով ԱՄՆ՝ Սան Ֆրանցիսկոյում իր նախաձեռնությամբ հիմնում է "American National Committee to Aid Homeless Armenians" («Հայրենազուրկ հայերի օգնության ամերիկյան ազգային կոմիտե)՝ համառոտագրված՝ «ԱՆՉԱ» («ANCHA») կազմակերպությունը: Նրան հաջողվում է 1948 թ. աշնանը կազմակերպել ճամբարի առաջին խմբի տեղափոխումը ԱՄՆ՝ «Տեղահանված անձինք» ("Displaced Persons") կարգավիճակով:

1949 թ. շատերի հետ ԱՄՆ է տեղափոխվում նաև Ֆրնդրքյանների ընտանիքը: Հաստատվելով Մոնթեբելոյում՝ Ներսես Ֆրնդրքյանը՝ պայծառ այս հայ մտավորականը, շարունակում է իր ազգանվեր գործը՝ ջանք չխնայելով պահպանելու հայոց ոգին ու ինքնությունը:

Որդին՝ Վարդանը, սովորում է Դեթրոյթի նահանգային Ուեյն համալսարանում ("Wayne State university")՝ ուսումն ավարտելով Լոս Անջելրսի Նորթրոփ տեխնիկական ինստիտուտում ("Northrop institute of Technology"), ստանալով "Bachelor of Science"-ի վկայական: Նա սկսում է աշխատել որպես "Aerospace"-ի ճարտարագետ: Շուրջ 30 տարի աշխատել է "Rockwell International" ("Boeing") ընկերությունում, որտեղ իր մասնագիտական հմտություններ ի գործ դրեց "Apollo", Explorer", "Space Shuttle" և Space Station" նախաձեռնությունների իրականացման գործում:

Վարդան Ֆրնդրքյանի անունն արձանագրված է 1969 թ. «Apollo-11» տիեզերանավով Լուսնի վրա տեղադրված ցանկում:

Վ. Ֆրնդրքյանը, շարունակելով իր հոր ազգանվեր գործը, դարձավ Մոնթեբելոյի՝ ԱՄՆ-ի հնագույն հայ համայնքի դպրոցի, եկեղեցու և կուսակցական կառույցի հիմնման ու կազմակերպման նախաձեռնողը: Նա այն անհատներից էր, որ չափազանց կարևորում էր համայնքում հայեցի դաստիարակությունը: Նրա ջանքերով բացվեց Կալիֆորնիայի Մեսրոպյան դպրոցը, հիմնվեցին Մոնթեբելոյի՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողը, Հայ կենտրոնը, եկեղեցու և ՀՕՄ-ի մանկամսուրները, Արևմտյան Ամերիկայի «Հայ երիտասարդաց դաշնակցության (ՀԵԴ) ճամբարը»:

Վարդանն իր կնոջ՝ Սոնա Մինասյանի հետ ծանոթացել է 1960 թ. Մոնթեբելոյում, որտեղ Սոնան փոխադրվել էր Ալեքսանդրիայից՝ համալսարանական ուսումը շարունակելու: Նրանք ամուսնացան 1961 թ. և ունեցան 3 զավակ՝ Կատարինեն, Այիսը և Արամը: Վ. Ֆընդըքյանը կազմեց օրինակելի մի ընտանիք՝ իր զավակներին փոխանցելով նախնիներից ժառանգած ազգային ոգին և մտավորականի իսկական ապրելակերպ:

Ժողովրդական վրիժառու, Բաքվի հայերի 1918 թ. ջարդը կազմակերպած Ջվանշիր Բեհբութ խանի ահաբեկումն իրագործած Միսաք Թոռլաքյանի հետ.

ՀՅԴ Արևմտյան Ամերիկայի Կենտրոնական կոմիտեների անդամ էր նա, Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ: Անմնացորդ նվիրումի այս հայորդու կյանքում կարևոր է եղել բարեկամությունը հայ ժողովրդական վրիժառու Միսաք Թոռլաքյանի հետ: Վարդանը նաև իր մասնակցությունն է բերել ամերիկյան քաղաքական աշխատանքներում՝ ի նպաստ հայությանը վերաբերող հարցերի դրական լուծման:

Պատկառանք ներշնչող բարի դեմքի հետ միասին նրան մի առանձին հմայք էին տալիս արևելահայերենի և ռուսերենի համակողմանի իմացությունը, որը նրա հաջողության գրավականներից էր: Իր մտերիմ բարեկամների՝ Աբրահամ Արծրունյանի և Բորիս Կիրակոսյանի հետ միասին Վարդանն ստեղծեց "Bingo" կազմակերպությունը, որի նյութական շահերն ի սպաս դրվեցին հայ համայնքի կենսական հարցերի լուծման: Չորս տարի առաջ էլ Արցախում նա իր կնոջ՝ Սոնայի հետ հիմնեց «Թոռլաքյան-Ֆընդըքյան» կենտրոնը:

Հայաստանում ու Արցախում իրականացված բազմաթիվ բարեգործական ծրագրերում իր կարևոր ներդրումն է ունեցել Վարդան Ֆընդըքյանը: «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազ-

Գուրգեն Մելիքյանը Վարդան Ֆընդըքյանի հետ

մազավակ ընտանիքների հիմնադրամի» ամենից պարտաճանաչ բարեգործներից մեկն էր նա: Նրա պայծառ հիշատակը վառ կմնա սերունդների սրտերում:

Օրհնանք ու փառք նրա լուսավոր հիշատակին:

Բարի հիշենք նրան և «տանք զօղորմին»:

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

2012թ. մայիսի 9-ին Շուշիում: Աջից՝ Դր. Վարդգես Նաջարյան, Գուրգեն Մելիքյան, Յուրա Միքայելյան, Սերյան Չիլինգարյան, Աշոտ Պողոսյան



Քարվաճառը ազատագրելուց մեկ շաբաթ հետո, 1993թ.Դադիվանքում: Ձախից աջ՝ Գուրգեն Մելիքյան, Անդրիաս Ռուբիյան, բարերար Նյու Յորքից, հրամանատար Արթուր Ալեքսանյան, Պարգև Սրբազան, հրամանատար Նորայր Դանիելյան, ֆրանսահայ ազատամարտիկ Հովսեփ Հովսեփյան (Լևոն Ժիլբերտ Մինասյան), Տեր Հովհաննես, Ավետիս Հինդյան, Անդրանիկ Շահինյան

Ծաղկաքաղ «Բարեգործ» թերթի նախորդ համարների էջերից:

Ուղերձը՝ մեծանուն բարերար Տիկ. Քերոլան Նաջարյանին

Ստեփանակերտի "Արփեն" մոր և մանկան կենտրոնի հիմնադիրներ Քերոլան և Ջորջ Նաջարյանները

"Արփեն" մոր և մանկան կենտրոնի հովանավորները

Բարերար Սերոժ Մեսրոպյանը և Գուրգեն Մելիքյանը Ստեփանակերտի «Արփեն» մայր և նորածին կենտրոնին երեխաների ամառային հագուստներ հանձնելիս

Հայրենի հողում տնկված ծառը հրճվանք է պարգևում

ԵՊՀ 100-ամյակի այգու հուշաքարը Բերձորում

Հուշագրի ստորագրումից հետո, «Գազպրոմ Արմենիա» ուսումնա-սպորտային համալիրը Արցախի կողքին է

Մեծ Շենի դպրոցի երեխաները Հայաստանում արտադրված կնգուղավոր հագուստներ-նվեր ստանալուց հետո



Զորակոչիկի նամակը ուսուցչին

Ծառատունկի եռուզեռը Վարդան Ստեփանյանի (Դուշման Վարդան) անունը հավերժացնող նորաստեղծ պուրակում

Արտերկրից ժամանածները հայրենի հողում՝ Սարգիս Բաղդասարյանի հայտնի «Տատիկ ու Պապիկ» քանդակի մոտ վերստին համվոզվեցին, որ իրոք մենք ենք մեր սարերը

Մեր հայրենակից Նորամայր Ավանեսյանն իրականացնում է օրինակելի բարեգործություն՝ օրական նվիրաբերելով մեկ դոլար հիմնադրամին

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» շքանշանը հանձնեց Գուրգեն Մելիքյանին

Մեր ժողովրդի գերմանացի բարեկամ պրոֆ. Թեսա Հոֆմանի անվան նորաստեղծ պուրակ-ծառուղում

Դահրավ գյուղի դպրոցի ուսուցիչների միջավայրում: Նրանք գերադասեցին լուսանկարվել փառքի սրահում՝ հայրենիքի ազատության համար նահատակված հերոսների հետ

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հիմնադրամի սիրելի բարեկամներ,

Արցախից բռնագաղթված և ՀՀ տարբեր մարզերում ապաստանած մեր շահառուներին հայտնաբերելով՝ հիմնադրամը, որպես առաջնահերթ օգնություն, տրամադրել է տաք, կնգուղավոր (կապիշոնով) վերնազգեստ և պահածոյացված սննդի տեսականի՝ երկուսն էլ Հայաստանում արտադրված:

Այդ նպատակով հիմնադրամից փոխանցվել է՝

ա) կնգուղավոր տաք վերնազգեստի համար՝ 995 000 Դ,

բ) պահածոյացված սննդի տեսականու համար՝ 2 473 740 Դ:

* * *

Ստորև ներկայացված մեր հիմնադրամի արտարժույթային և ՀՀ դրամի բանկային տվյալներով կկարողանաք օգտակար լինել հիմնադրամի շահառուներին, որոնք բռնագաղթել են Արցախից:

Beneficiary Bank: Ardshinbank, CJSC, street G. Lusavorich 13, Yerevan, Armenia
SWIFT code ASHBAM22
Beneficiary : G. Melikian found of the family of multichild of the Kashatagh
EUR 2475704668770010
USD 2475704668770020
ARM 2475704668770000

Corr Bank.
USD CITIBANK NA NEW YORK SWIFT: CITIUS33 ACC36209105
EUR COMMERZBANK SWIFT : AG DRESDEFF ACC 499/0800065700/888
RUR SBERBANK ROSSII; Moscow Swift: SABRRUMM 012
БИК: 044525225 K/C 30101810400000000225
ACC:30111810600000000435

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ ՊԱՐԳԵՎԻ
բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Խմբագրակազմ՝
ԱՎԱԳՅԱՆ Ա., բ.գ.դ. պրոֆեսոր
ՄԵԼԻՔՅԱՆ Գ., բ.գ.թ. պրոֆեսոր
ՍԱՖԱՐՅԱՆ Ալ., պ.գ.թ., պրոֆեսոր
Շարվածքը և ձևավորումը՝ Ս. Մուրադյանի

Տպաքանակը՝ 99
Թերթը բաժանվում է անվճար:
Հասցե՝ Երևան 0025, Աբովյան 5 Ա,
բանասիրության ֆակ. մասնաշենք, 212 սեն.;
Հեռ., 060-710617, 055-522936; 552537